ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՆՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3

ք. Կապան «07. 09.2020» 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գնորգ Փարսյան, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կառլին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառունխախտելէպայմանագրի 1.3 կետումնախատեսվածժամկետը (ներառյալօրացուցայինգրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներներ կայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելունպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքնը նդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավորվում՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքներ իմասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարակ անձրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2-կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 18499153 (տասնութ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում, դրամական միջոցների փոխանցումը կատարված աշխատանքների դիմաց կատարվում է հետևյալ կերպ՝

5.3.1գումարի 40տոկոսը վճարվում է համայնքային բյուջեից.

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից սկզբում հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 40 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312512040՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

5.3.2 գումարի 60 տոկոսը վճարվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրի հիման վրա՝ պետական բյուջեից.

Կատարողի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 60 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312000491՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

Պատվիրատուի կողմից համայնքի մասնաբաժնով վճարում կատարվելուց հետո պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի և վճարային փաստաթղթերի սկանավորված տարբերակները ներկայացվում են ՀՀ Սյունիքի մարզպետարան: Մարզպետարանի կողմից փաստաթղթերը համապատասխան մարմիններ ներկայացվելուց և հաստատվելուց հետո միայն պետական բյուջեից հատկացվում են ֆինանսական միջոցներ՝ փոխանցում կատարելով մարզպետարանին: Գումարը մարզպետարանի կողմից համայնքի բյուջետային հաշվին փոխանցվելուց հետո Գնորդի կողմից կատարվում է դրամական միջոցների փոխանցում Վաճառողին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկա տարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրի ցծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձհամաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ունենալու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմվածէ ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<Կաոլին>> ՍՊԸ
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Շահումյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 900312512040 /40%, համայնք/	ՀՀ 1570020538070100
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/	ՀՎՀՀ 09424186
ՀՎՀՀ 09426088	տնօրեն՝ Մ. Կարապետյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելվածթիվ 1
« 07. » դեկտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱԵՁԲ-20/1/3ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
Չափաբաժին 5

Կապան քաղաքի « Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգում»

հազ. ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Աշխատանքի միավորի ընդհանուր արժեքը	Աշխատանքի ընդհանուր արժեքը
1	3	4	5	6	7
	Կապան քաղաքի «Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգում» ПК1-ПК 2				
	Մայթեր				
1	Մայթերի բազալտե եզրաքարերի քանդում	մ	170.0	0.840	142.800
2	Բազալտե եզրաքարերի քանդում ծառերի շուրջ	մ	83.7	0.840	70.308
3	Մայթերի ասֆալտ բետոնե ծածկի քանդում	քմ	376.0	0.057	21.432
4	Մայթերի խճային հիմքի քանդում 5,0 սմ 376,0քմ	խմ	18.80	0.525	9.870
5	Շինարարական աղբի բարձում ավտոմեքենաներին	խմ	41.0	0.665	27.265
6	Շինարարական աղբի տեղափոխում 10 կմ հեռ վրա	տ	49.2	3.075	151.290
7	24սմ-ից ավել տրամագծով ծառերի արմատների հանում 79կվտ տրակտորով տեղափոխելով մինչև 5մ	հատ	19.0	0.690	13.110
8	Փոսերի հետադարձ լիցքի իրականացում ձեռքով	խմ	3.80	0.878	3.336
9	Բետոնե հենապատի թասակի քանդված հատվածների վերականգնում ց/ավազե շաղախով 4,0սմ	քմ	15.20	1.555	23.636
10	Բետոնե ցանկապատի քայքայված մակերեսի սվաղում 2,0սմ հաստությամբ	քմ	28.60	1.433	40.984
11	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ	մ	170.0	11.211	1905.870
12	Բազալտե եզրաքարերի տեղադրում ծառերի շուրջը 120x300 մմ (35 ծառ)	մ	105.0	9.255	971.775
13	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում մայթերի վերանորոգման սահմանագծում 500x200x60մմ	մ	2.2	5.555	12.221
14	Նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով 12սմ հաստությամբ 376քմ	խմ	45.12	4.012	181.021
15	Մայթերի սալարկում բետոնե սալիկներով 4,0սմ հաստությամբ ցեմենտավազային խառնուրդով 1;3 հարաբերությամբ	քմ	376.0	4.969	1868.344
16	Խճային հիմքի իրականացում ճանապարհի վնասված հատվածների վերականգնման համար h=8սմ	քմ	4.80	1.028	4.934
17	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բ h=5 սմ	քմ	4.80	3.880	18.624
18	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի շերտի իրականացում մանրահատիկ ա/բ h=4 սմ	քմ	4.80	4.472	21.466
19	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին	խմ	7.20	0.444	3.197

	ծառերի տնկման համար				
20	Բնահողի տեղափոխում 10 կմ հեռ	տ	8.64	3.075	26.568
21	Բնահողի հետադարձ լիցքի իրականացում նոր տնկվող ծառերի տակ	խմ	7.2	0.878	6.322
22	Նոր տնկվող ծառերի փոսերի նախապատրաստում ձեռքով	փոս	29.0	3.990	115.710
23	Դեկորատիվ ծառերի տնկում	ծառ	29.0	11.461	332.369
	Ընդամենը				5972.452
	Դիտահոր				
1	Թուջե կափարիչների ապամոնտաժում	հատ	9.0	1.086	9.774
2	Դիտահորի նիշի բարձրացում 15,0 սմ-ով Բ15 դասի բետոնով 9 հատ	խմ	0.65	61.095	39.712
3	Ապամոնտաժված թուջե կափարիչների տեղադրում	հատ	9.0	2.254	20.286
	Ընդամենը				69.772
	Թեքահարթակ 3հատ				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 120x300 մմ	մ	10.02	9.255	92.735
2	Խճային հիմքի կառուցում 8սմ հաստությամբ 15-20մմ	խմ	0.27	9.853	2.660
3	Թեքահարթակի նախաշերտի կառուցում Բ 15 դասի բետոնով 6 սմ հաստությամբ	խմ	0.21	41.434	8.701
4	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	3.60	1.211	4.360
5	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալիկներով 3,0 սմ հաստությամբ	քմ	3.60	14.794	53.258
	Ընդամենը				161.715
	Աղբամաններ 4 հատ				
1	Մետաղական աղբամանների ապամոնտաժում	հատ	4.0	3.920	15.680
2	Փոսերի փորում աղբամանների տեղադրման համար	խմ	0.16	3.913	0.626
3	Փոսերի բետոնացում Բ 15 դասի բետոնով	խմ	0.16	40.776	6.524
4	Մետաղական աղբամանների մոնտաժում	հատ	4.0	14.483	57.932
5	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	2.872	0.856	2.458
	Ընդամենը				83.221
	Էլեկտրականություն				
1	Լուսավորության մետաղական սյուների ապամոնտաժում Φ-76x4 5 հատ	տ	0.036	2.348	0.083
2	Խրամուղու փորում ձեռքով մալուխի տեղադրման համար	խմ	25.00	2.100	52.500
3	Վինիլպլաստե /մետաղապլաստե/ խողովակների տեղադրում խրամուղում Φ=25x2,3մմ	մ	160.0	0.898	143.680
4	Փոսերի փորում լուսավորության նոր հենասյունների համար - 9 հատ	խմ	2.52	3.913	9.861
5	Փոսերի բետոնացում Բ15 դասի բետոնով	խմ	2.52	40.557	102.204
6	ամրան 16 AIII	կգ	22.50	0.430	9.675
7	Նոր մետաղական սյուների տեղադրում Φ=108x4-70,2մ , (9հատ), Φ=76x3,5-43,2մ 9 հատ)	տ	0.934	98.257	91.728
8	խողովակ Φ=108x4- 9 հատ	մ	70.2	5.332	374.306
9	խողովակ Φ=76x3,5 -9 հատ	մ	43.2	3.285	141.912
10	Մետաղական խողովակների եռակցում սյուներին	տ	0.119	67.615	8.069
11	Խողովակ Φ=40x3	մ	31.50	1.787	56.291
12	Խողովակ Φ=159x4	մ	2.16	7.846	16.947
13	Անկյունակ 45x45x4	մ	6.30	1.470	9.261
14	Մետաղական բաժանարար տուփերի մոնտաժում սյուների (թիթեղ 1,5մմ հաստությամբ)-9հատ	տ	#######	67.615	0.459
15	Թիթեղ 1,5 մմ հաստ	քմ	0.72	6.860	4.939
16	Ալյումինե մալուխի անցկացում /վինիլպլաստե/ մետաղապլաստե խողովակի միջով ԱՎՎԳ-1 4 x16 մմ	մ	169.0	0.943	159.367
17	Ալյումինե մալուխի անցկացում մետաղական սյուների միջով ԱՎՎԳ-1 2x4 մմ	մ	122.4	0.297	36.353

18	Ալյումինե մալուխի անցկացում մետաղական սյուների վրայով վերգետնյա ԱՎՎԳ 4x16մմ	մ	26.0	1.231	32.006
19	Մեկուսիչների տեղադրում	հատ	2.00	1.436	2.872
20	Լուսարձակների մոնտաժում (լեդ) 50W	հատ	18.0	22.107	397.926
21	Անկյունակ մեկուսիչների համար 45x45x4	մ	0.70	1.470	1.029
22	Մետաղական խողովակների յուղաներկում	քմ	36.90	0.856	31.586
	Ընդամենը				1683.054
	Ընդամենը				**7970.213**
	Կապան քաղաքի «Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգում» ՊԿ2- ՊԿ3				
	Մայթեր				
1	Մայթերի բազալտե եզրաքարերի քանդում	մ	146.0	0.840	122.640
2	Մայթերի ասֆալտ բետոնե ծածկի քանդում	քմ	308.8	0.057	17.602
3	Մայթերի խճային հիմքի քանդում 5,0 սմ	խմ	15.44	0.525	8.106
4	Շինարարական աղբի բարձում ավտոմեքենաներին	խմ	30.40	0.665	20.216
5	Շինարարական աղբի տեղափոխում 10 կմ հեռ վրա	տ	36.5	3.075	112.238
6	Բետոնե հենապատի թասակի քանդված հատվածների վերականգնում ց/ավազե շաղախով 4,0սմ	քմ	4.60	1.555	7.153
7	Բետոնե ցանկապատի քայքայված մակերեսի սվաղում 2,0սմ հաստությամբ	քմ	10.30	1.337	13.771
8	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ	մ	146.0	11.211	1636.806
9	Բազալտե եզրաքարերի տեղադրում ծառերի շուրջը 120x300 մմ (35 ծառ)	մ	33.0	9.255	305.415
10	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում մայթերի վերանորոգման սահմանագծում 500x200x60մմ	մ	24.0	5.555	133.320
11	Նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով 12սմ հաստությամբ 308,8քմ	խմ	37.06	4.012	148.669
12	Մայթերի սալարկում բետոնե սալիկներով 4,0սմ հաստությամբ ցեմենտավազային խառնուրդով 1;3 հարաբերությամբ	քմ	308.8	4.969	1534.427
13	Խճային հիմքի իրականացում ճանապարհի վնասված հատվածների վերականգնման համար h=8սմ	քմ	3.000	1.028	3.084
14	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բ h=5 սմ	քմ	3.00	3.880	11.640
15	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի շերտի իրականացում մանրահատիկ ա/բ h=4 սմ	քմ	3.00	4.765	14.295
16	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0,5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին ծառերի տակ	խմ	2.20	0.443	0.975
17	Բնահողի տեղափոխում 10 կմ հեռ	տ	2.64	3.075	8.118
18	Բնահողի հետադարձ լիցքի իրականացում նոր տնկվող ծառերի տակ (11x0,2)	խմ	2.2	0.878	1.932
19	Նոր տնկվող ծառերի փոսերի նախապատրաստում ձեռքով	փոս	11.0	3.990	43.890
20	Դեկորատիվ ծառերի տնկում	ծառ	11.0	11.461	126.071
	Ընդամենը				4270.366
	Դիտահոր				
1	Թուջե կափարիչների ապամոնտաժում	հատ	2.0	1.086	2.172
2	Դիտահորի նիշի բարձրացում 15,0 սմ-ով Բ15 դասի բետոնով 2 հատ	խմ	0.14	61.095	8.553
3	Ապամոնտաժված թուջե կափարիչների տեղադրում	հատ	2.0	2.254	4.508
	Ընդամենը				15.233
	Թեքահարթակ 1հատ				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 120x300 մմ	մ	6.68	9.255	61.823
2	Խճային հիմքի կառուցում 8սմ հաստությամբ 15-20մմ	խմ	0.18	9.853	1.774
3	Թեքահարթակի նախաշերտի կառուցում Բ 15 դասի բետոնով 6 սմ հաստությամբ	խմ	0.14	41.434	5.801

4	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	2.40	1.211	2.906
5	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալիկներով 3,0 սմ հաստությամբ	քմ	2.40	14.794	35.506
	Ընդամենը				107.810
	Աղբամաններ 4 հատ				
1	Մետաղական աղբամանների ապամոնտաժում	հատ	2.0	3.920	7.840
2	Փոսերի փորում աղբամանների տեղադրման համար	խմ	0.16	3.913	0.626
3	Փոսերի բետոնացում Բ 15 դասի բետոնով	խմ	0.16	40.776	6.524
4	Մետաղական աղբամանների մոնտաժում	հատ	4.0	14.483	57.932
5	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	2.872	0.856	2.458
	Ընդամենը				75.381
	Բետոնե առու				
1	Խրամուղու փորում ձեռքով	խմ	0.65	2.100	1.365
2	Բետոնե հատակի կառուցում Բ 15 դասի բետոնով	խ.մ.	0.11	41.434	4.558
3	Բետոնե առվակի պատերի կառուցում Բ 15 դասի բետոնից 15,0 սմ հաստությամբ կաղապարամածը միակողմանի	խ.մ.	0.32	74.540	23.853
4	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.102	159.013	16.203
5	Անկյունակ 75x75x6	մ	12.0	3.605	43.260
6	Ամրան A III դասի	տ	0.0256	429.904	11.006
7	Մետաղական ճաղաշարի յուղաներկում երկու շերտ	քմ	1.44	1.172	1.685
	Ընդամենը				101.929
	Էլեկտրականություն				
1	Լուսավորության մետաղական սյուների ապամոնտաժում Φ-100x4 1 հատ	տ	0.0096	2.348	0.023
2	Խրամուղու փորում ձեռքով մալուխի տեղադրման համար	խմ	23.10	2.100	48.510
3	Վինիլպլաստե /մետաղապլաստե/ խողովակների տեղադրում խրամուղում Φ=25x2,3մմ	մ	148.0	0.898	132.904
4	Փոսերի փորում լուսավորության նոր հենասյունների համար - 7 հատ	խմ	1.96	3.913	7.669
5	Փոսերի բետոնացում Բ15 դասի բետոնով	խմ	1.96	40.557	79.492
6	ամրան 16 AIII	կգ	17.50	0.430	7.525
7	Նոր մետաղական սյուների տեղադրում 7 հատ	տ	0.726	98.257	71.344
8	խողովակ Φ=108x4- 7 հատ	մ	54.6	5.332	291.127
9	խողովակ Φ=76x3,5 -7 հատ	մ	33.6	3.285	110.376
10	Մետաղական խողովակների եռակցում սյուներին	տ	0.093	67.615	6.276
11	Խողովակ Φ=40x3	մ	24.50	1.787	43.782
12	Խողովակ Φ=159x4	մ	1.68	7.846	13.181
13	Մետաղական բաժանարար տուփերի մոնտաժում սյուների (թիթեղ 1,5մմ հաստությամբ)-7հատ	տ	0.0053	67.615	0.357
14	Թիթեղ 1,5 մմ հաստ	քմ	0.56	6.860	3.842
15	Ալյումինե մալուխի անցկացում /վինիլպլաստե/ մետաղապլաստե խողովակի միջով ԱՎՎԳ-1 4 x16 մմ	մ	152.00	0.943	143.336
16	Ալյումինե մալուխի անցկացում մետաղական սյուների միջով ԱՎՎԳ-1 2x4 մմ	մ	95.200	0.297	28.274
17	Լուսարձակների մոնտաժում (լեդ) 50W	հատ	14.0	22.107	309.498
18	Մետաղական խողովակների յուղաներկում	քմ	28.70	0.856	24.567
	Ընդամենը				1322.082
	Ընդամենը				**5892.802**
	Կապան քաղաքի «Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգում» ՊԿ3 - ՊԿ4				
	Մայթեր				
1	Մայթերի բազալտե եզրաքարերի քանդում	մ	146.0	0.840	122.640
2	Մայթերի ասֆալտ բետոնե ծածկի քանդում	քմ	386.30	0.057	22.019
3	Մայթերի խճային հիմքի քանդում 5,0 սմ	խմ	19.32	0.525	10.140
4	Շինարարական աղբի բարձում ավտոմեքենաներին	խմ	35.0	0.665	23.275

5	Շինարարական աղբի տեղափոխում 10 կմ հեռ վրա	տ	42.7	3.075	131.303
6	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ	մ	146.0	11.211	1636.806
7	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում մայթերի վերանորոգման սահմանագծում 500x200x60մմ	մ	3.5	5.555	19.443
8	Նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով 12սմ հաստությամբ 386,3քմ	խմ	46.36	4.012	185.980
9	Մայթերի սալարկում բետոնե սալիկներով 4,0սմ հաստությամբ ցեմենտավազային խառնուրդով 1;3 հարաբերությամբ	քմ	386.3	4.969	1919.525
10	Խճային հիմքի իրականացում ճանապարհի վնասված հատվածների վերականգնման համար h=8սմ	քմ	5.5	1.029	5.660
11	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի ներքին շերտի իրականացում խոշորահատիկ ա/բ h=5 սմ	քմ	5.5	3.880	21.340
12	Ճանապարհի վնասված հատվածների ծածկի շերտի իրականացում մանրահատիկ ա/բ h=4 սմ	քմ	5.5	4.472	24.596
	Ընդամենը				4122.726
	Դիտահոր				
1	Թուջե կափարիչների ապամոնտաժում	հատ	3.0	1.086	3.258
2	Դիտահորի նիշի բարձրացում 15,0 սմ-ով Բ15 դասի բետոնով 3 հատ	խմ	0.22	61.095	13.441
3	Ապամոնտաժված թուջե կափարիչների տեղադրում	հատ	3.0	2.254	6.762
	Ընդամենը				23.461
	Թեքահարթակ 2հատ				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 120x300 մմ	մ	3.34	9.255	30.912
2	Խճային հիմքի կառուցում 8սմ հաստությամբ 15-20մմ	խմ	0.09	9.853	0.887
3	Թեքահարթակի նախաշերտի կառուցում Բ 15 դասի բետոնով 6 սմ հաստությամբ	խմ	0.07	41.434	2.900
4	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	1.20	1.211	1.453
5	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալիկներով 3,0 սմ հաստությամբ	քմ	1.20	14.794	17.753
	Ընդամենը				53.905
	Աղբամաններ 3 հատ				
1	Փոսերի փորում աղբամանների տեղադրման համար	խմ	0.12	3.913	0.470
2	Փոսերի բետոնացում Բ 15 դասի բետոնով	խմ	0.12	40.776	4.893
3	Մետաղական աղբամանների մոնտաժում	հատ	3.0	14.483	43.449
4	Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ	քմ	2.154	0.856	1.844
	Ընդամենը				50.656
	Էլեկտրականություն				
1	Լուսավորության մետաղական սյուների ապամոնտաժում Փ-100x4 1 հատ	տ	0.0288	2.348	0.068
2	Խրամուղու փորում ձեռքով մալուխի տեղադրման համար	խմ	7.00	2.100	14.700
3	Վինիլպլաստե /մետաղապլաստե/ խողովակների տեղադրում խրամուղում Փ=25x2,3մմ	մ	45.0	0.898	40.410
4	Փոսերի փորում լուսավորության նոր հենասյունների համար -2 հատ	խմ	0.56	3.913	2.191
5	Փոսերի բետոնացում Բ15 դասի բետոնով	խմ	0.56	40.557	22.712
6	ամրան 16 AIII	կգ	5.0	0.430	2.150
7	Նոր մետաղական սյուների տեղադրում 2 հատ	տ	0.207	98.257	20.384
8	խողովակ Փ=108x4- 2 հատ	մ	15.6	5.332	83.179
9	խողովակ Փ=76x3,5 -2 հատ	մ	9.6	3.285	31.536
10	Մետաղական խողովակների եռակցում սյուներին	տ	0.041	67.615	2.740
11	Խողովակ Փ=40x3	մ	7.0	1.787	12.509
12	Խողովակ Փ=159x4	մ	0.48	7.846	3.766
13	Մետաղական բաժանարար տուփերի մոնտաժում սյուների (թիթեղ 1,5մմ հաստությամբ)-2հատ	տ	0.0015	67.615	0.102

14	Թիթեղ 1,5 մմ հաստ	քմ	0.16	6.860	1.098
15	Ալյումինե մալուխի անցկացում /վինիլպլաստե/ մետաղապլաստե խողովակի միջով ԱՎՎԳ-1 4 x16 մմ	100 մ	47.00	0.943	44.321
16	Ալյումինե մալուխի անցկացում մետաղական սյուների միջով ԱՎՎԳ-1 2x4 մմ	մ	27.2	0.297	8.078
17	Լուսարձակների մոնտաժում (լեդ) 50W	հատ	4.0	22.107	88.428
18	Մետաղական խողովակների յուղաներկում	քմ	8.20	0.856	7.019
	Ընդամենը				385.391
	Ընդամենը				4636.138
	Ընդամենը				18499.153
	ԱԱՀ 20%				0
	Ընդամենը				18499.153

Աշխատանքներն իրականացվում են կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերին համաձայն, բարձր որակով, աշխատանքի ընթացքում հաշվի են առնվում լաբորատոր փորձարկումները,

Կապալառուն աշխատանքները կատարում է Կապան համայնքի ըստ ծավալաթերթում նշված հասցեի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կաոլին>> ՄՊԸ
Ք. Կապան, Շահումյան 1
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570020538070100
ՀՎՀՀ 09424186
տնօրեն՝ Մ. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«07» դեկտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱԵՁԲ-20/1/3ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուիկողմիցկատարվելիք աշխատանքներիառանձինտեսակների անվանումներ	Աշխատանքներիկատարմանժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
5	Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, հատույնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կաոլին>> ՍՊԸ
Ք. Կապան, Շահումյան 1
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570020538070100
ՀՎՀՀ 09424186
տնօրեն՝ Մ. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«07» 08 2020թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, հաշվեհամար, գումար			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
					օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	45231177-5	Մ.Ստեփանյան փողոցի մայթի մի հատվածի վերանորոգման աշխատանքներ	900312512040	18499153	7399661.2	7399661.2	7399661.2	7399661.2	7399661.2	7399661.2
			900312000491		11099491.8	11099491.8	11099491.8	11099491.8	11099491.8	11099491.8

* *Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կաոլին>> ՍՊԸ
Ք. Կապան, Շահումյան 1
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 1570020538070100
ՀՎՀՀ 09424186
տնօրեն՝ Մ. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«07» 08 2020թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
Կապանի համայնքապետարան
Գտնվելու վայրը Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա

ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
Հվհհ 09426088

Պայմանագրի կողմ
<<Կառլին>> ՍՊԸ
Գտնվելու վայրը Ք. Կապան, Շահումյան 1
հհ 1570020538070100
հվհհ 09424186

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Կապան համայնքի ճանապարհների, բակերի, մայթերի վերանորոգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
07.08 *2020թ. կնքված*
ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Կապանի համայնքապետարանը -ի(այսուհետ՝ Պատվիրատու) և

<<Կաղին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/1/3 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն